

**ՓԱՍՏԱԹՂԱՅԻՆ ԱԿՐԵԴԻՏԻՎՆԵՐԻ, ԲԱՆԿԱՅԻՆ  
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ և ԻՆԿԱՍՈՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐ և ՍԱԿԱԳՆԵՐ**

## Ընդհանուր պայմաններ

- 1.** Բանկային երաշխիքները (այսուհետ՝ Երաշխիք(ներ)), փաստաթղթային ակրեդիտիվները և ինկասոները (այսուհետև փաստաթղթային գործառնությունների գործիքներ) տրամադրվում են Բանկի կողմից իր հաճախորդներին առևտրային և տնտեսական գործարքներն իրականացնելու համար: Երաշխիքները կարող են տրամադրվել մրցութային առաջարկության (հայտի) ապահովման, պայմանագրի կատարման, կանխավճարի ապահովման, վճարային և այլ տեսակի պարտավորությունների ապահովման, այլ նպատակների համար:
- 2.** Փաստաթղթային գործառնությունների գործիքները տրամադրվում են ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին:
- 3.** Փաստաթղթային գործառնությունների գործիքները տրամադրման հետ կապված գործարքները (օրինակ՝ գրավ, երաշխավորություն և այլն) կնքվում են Բանկի կողմից սահմանված տիպային ձևի փաստաթղթերով:
- 4.** Փաստաթղթային գործառնությունների գործիքները ձեռք բերման համար Հաճախորդը Բանկում պետք է ունենա Բանկային հաշիվ:
- 5.** Փաստաթղթային գործառնությունների գործիքները Բանկի կողմից կարող են տրամադրվել ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, ԵՎՐՈ-ով, ՌԴ ռուբլով և այլ արտարժույթներով՝ ըստ պայմանավորվածության: Հաշվարկված տոկոսները գանձվում/վճարվում են ՀՀ դրամով՝ անկախ արժույթից:
- 6.** Փաստաթղթային գործառնությունների գործիքների տրամադրումը Բանկի կողմից կարող է մերժվել, եթե բանկի սուբյեկտիվ գնահատականով դիմող անձը չի տիրապետում իր պայմանագրային պարտավորությունները կատարելու համար բավարար ֆինանսական, տեխնիկական, մարդկային կամ այլ ռեսուրսների:
- 7.** Բանկը կարող է գործող Սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին ծանուցում է իր Հաճախորդներին՝ համաձայն ՀՀ օրենքների: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված պահից և չունեն հետադարձ ուժ:
- 8.** Բոլոր տեսակի ակրեդիտիվների և երաշխիքների դեպքում տոկոսագումարը գանձվում է հետևյալ եղանակներով՝
  - 8.1. Տոկոսագումարը գանձվում է երաշխիքի/ակրեդիտիվի տրամադրման պահին՝ ամբողջ ժամանակահատվածի համար
  - 8.2. Տոկոսագումարը գանձվում է երաշխիքի/ակրեդիտիվի գործողության ընթացքում յուրաքանչյուր ամսվա վերջում
  - 8.3. Տոկոսագումարը գանձվում է երաշխիքի/ակրեդիտիվի գործողության ընթացքում յուրաքանչյուր եռամսյակի/կիսամյակի սկզբում ամբողջ եռամսյակի/կիսամյակի համար

<b>ԱԿՐԵԴԻՏԻՎՆԵՐ</b>	
<b>Ներմուծման ակրեդիտիվներ</b>	
<b>Ակրեդիտիվի նախնական տեղեկացում</b>	0.1% min 15000
<b>Ակրեդիտիվի թողարկում</b>	0.15% min 40000
<b>Փաստաթղթերի ընդունում և ստուգում</b>	
Առանց անհամապատասխանությունների	15000

Անհամապատասխանություններով	25000
<b>Պայմանների փոփոխություն</b>	30000
<b>Ակրեդիտիվի չեղյալ համարում</b>	30000
<b>Ակրեդիտիվի սպասարկում</b>	Պայմանագրային
<b>Ակրեդիտիվ դիմաց վճարում</b>	Ըստ բանկում գործող փոխանցումների սակագների
<b>Արտահանման ակրեդիտիվ</b>	
<b>Ակրեդիտիվի ծանուցում</b>	25000
<b>Փոփոխության ծանուցում</b>	15000
<b>Հաստատում</b>	
Դրամական միջոցներով ապահովվածություն դեպքում	0.5% տարեկան min 40000
Այլ ապահովվածության դեպքում	Պայմանագրային
<b>Փաստաթղթերի ստուգում</b>	25000
<b>Ակրեդիտիվի դիմաց վճարում</b>	0.2% min 30000
<b>Պահուստային ակրեդիտիվ</b>	
<b>Համաձայն միջազգային երաշխիքների սակագների</b>	

<b>ԻՆԿԱՍՈՆԵՐ</b>	
<b>Ներմուծման ինկասո</b>	
<b>Ինկասոյի ծանուցում</b>	20000
<b>Փոփոխության ծանուցում</b>	15000
<b>Ինկասոյի դիմաց վճարում</b>	Ըստ բանկում գործող փոխանցումների սակագների
Հաճախորդի կողմից չվճարված ինկասոյի փաստաթղթերի վերադարձ	20000 գումարած փոստային ծախսեր
<b>Արտահանման ինկասո</b>	
<b>Ինկասո հանձնարարականի թողարկում</b>	0.2% min 40000
<b>Փոփոխություն/չեղյալ համարում</b>	30000
<b>Փաստաթղթերի ուղարկում</b>	Ըստ փաստացի փոստային ծախսերի

<b>ԵՐԱՇԽԻՔՆԵՐ</b>	
<b>Միջազգային երաշխիքներ</b>	
<b>ՀՀ տարածքից դուրս գործող բենեֆիցիարի օգտին տրամադրվող երաշխիքներ</b>	
<b>Երաշխիքի թողարկում</b>	0.15% min 40000
<b>Փոփոխություն</b>	30000
<b>Չեղյալ համարում</b>	30000
<b>Վճարում պահանջի դիմաց</b>	0.5% min 50000
<b>Երաշխիքի սպասարկում</b>	Պայմանագրային
<b>Այլ բանկերի կողմից թողարկած բանկային երաշխիքների սպասարկում</b>	
<b>Երաշխիքի ծանուցում</b>	25000
<b>Փոփոխության ծանուցում</b>	15000
<b>Վճարման պահանջի ներկայացում</b>	20000
<b>Հաստատում</b>	Պայմանագրային
<b>ՀՀ ՏԱՐԱՃՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԵՆԵՖԻՑԻԱՐԻ ՕԳՏԻՆ ԹՈՂԱՐԿՎՈՂ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ</b>	
<b>Երաշխիքի թողարկման միանվագ վճար*</b>	25000
<b>Չեղյալ համարում</b>	15000
<b>Փոփոխություն</b>	15000
<b>Վճարում պահանջի դիմաց</b>	0.5% min 10000
<b>Երաշխիքի սպասարկում</b>	
<b>Դրամական ապահովվածության դեպքում</b>	1-3% տարեկան
<b>Այլ ապահովվածության դեպքում</b>	2-5% տարեկան

Մրցույթի մասնակցության երաշխիքների և բարձր ապահովվածությամբ երաշխիքների դեպքում թողարկման միանվագ վճարը սահմանվում է 10000 ՀՀ դրամ:  
Սակագները չեն ներառում միջնորդ (հաստատող/տեղեկացնող) բանկերի ծախսերը: